№ 62 Մարտի 14 (26) 1882 Մարտի 14 (26) № 62

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարազգացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ռուս մամուլի բանակիւը,—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Բագուից։ Նամակ Ախալցխայից։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Նամակ Շուշուց։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Սերբիա։ Բոսնիա և Հերցեգովինա։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՌՈՒՍ ՄԱՄՈՒԼԻ ԲԱՆԱԿՈՒԻԸ

—

Ահա մի ամբողջ տարի է արդէն որ շարունակվում է ռուս մամուլի երկու հակառակ բանակների մէջ կատաղի բանակռիւը։ Այդ երկու բանակներն են՝ մի կողմից իրան ազատամիտ մամուլ անուանողը, միւս կողմից յետադէմ, կամ իրան ժողովրդական մամուլ անուանողը։

Այդ վերջինը կատարելապէս արժանի է յետադէմ անուանվել, քանի որ չէ ընդունում եւրոպական քաղաքակրթ երկիրների լուսաւորութեան և առաջադիմութեան արդասիքը։

Յետադէմ մամուլը պնդում է որ ռուսաց ազգը ինքնուրոյն մի ազգ է և նա պէտք չունի օրինակ վերցնել եւրոպական երկիրներից։ Հետևել Եւրոպայի օրինակին, մամուլի այդ մասի կարծիքով, նշանակում է սարուկ, ծառայ լինել Եւրոպայի ձեռքում։

Բայց ազատամիտ մամուլը պատասխանում է որ ինքնուրոյն լինելը միմիայն ռուս ազգին յատկանիշ չէ, այլ ամեն ազգին յատուկ է։ Բոլոր քաղաքակիրթ երկիրների քաղաքակրթութիւնը ընդհանուր է, ասում է ազատամիտ մամուլը, բայց, մի և նոյն ժամանակ, ընդհանուր լուսաւորութեան և ծաղաքակրթութեան հետ չը կայ ընդհանուր եւրոպական ինքնուրոյնութիւն, այլ կայ ֆրանսիական, շվէյցարական, իտալական, գերմանական, անգլիական ինքնուրոյնութիւն։

Բայց զարմանալի է, որ յետադէմ մամուլը, որ այդքան թշնամի է արևմտեան քաղաքակրթութեան, մի և նոյն ժամանակ, քարոզում է իր էջերի մէջ այնպիսի գաղափարներ և համոզում է ռուսաց հասարակութեանը ընդունել այնպիսի հասարակական հիմնարկութիւններ, որոնք Եւրոպայում ճանաչված են արդէն որպէս հնացած և անպէտք։ Ուրեմն, ասում է ազատամիտ մամուլը, եթէ դուք ռուս ինքուրոյնութեան պաշտպան էք հանդիսանում, ի՞նչի եւրոպական նախանձելի, ժամանակակից և օգտաւէտ երևոյթները դուք վնասակար էք համարում ռուս ազգի համար, իսկ նոյն Եւրոպայի հնացած և արդէն նրա մօտ անպէտք համարված հասարակական երևոյթները և գաղափարները աշխատում էք պատուաստել ռուսաց հողի վրա։

Ուրեմն պարզ է որ ինքնուրոյն, իրան ազգային անուանող մամուլի մասը դարձնում է իր երեսը ոչ թէ ամեն բանից, որ եւրոպական է, արևմտեան է, այլ միայն եւրոպական կամ արևմտեան քաղաքակրթութեան այն երևոյթներից և ձևերից, որոնք նոր և ժամանակակից են, իսկ ներքին ազդմամբ ամբողջ սրտից համակրում է արևմտեան այն բոլոր հասարակական երևոյթներին, որոնք կամ արդէն անցել են Եւրոպայում, կամ հնացել են, կամ անցնելու վրա են և այսօր փաղը որ և է փոփոխութեան են ենթարկվելու։ Ուրեմն պարզ է որ իրան ազգային ասող մամուլը ոչ թէ ազգային ինքնուրոյնութեան կուսակից է, այլ միմիայն հնութեան պաշտպան է, ուրեմն յետադէմ է։ Եւ այդ մամուլի դէվիզն էլ է յետ դառնալ, վերադառնալ վաղուց անցած, գնացած ժամանակներին։

Ինչքան էլ հակակրելի լինէին Կատկովի, Ակսակովի, կամ նրանց նմանների համոզմունքները, բայց այդ կուսակցութեան օրգանները, այնու ամենայնիւ մի որոշ պրոգրամ ունեն՝ յետադիմութիւն, որոշ իդէալ ունեն՝ ստեղծել մի պօլիցիական պետութիւն։

Բայց ցաւալի է շատ որ միւս կողմը, ռուս ազատամիտ կուսակցութեան մամուլը, դեռ մինչև այժմ, ինչքան էլ նրան հրաւիրում է հակառակ բանակը պարզապէս արտայայտվելու, չէ իմանում, չէ կարողանում, կամ չէ վստահանում որոշ կերպով յայտնել իր պրոգրամը։

Ահա այս դրութեան մէջն է գտնվում այս րոպէիս ռուս մամուլի երկու միմեանցից տարբեր կուսակցութիւնների փոխադարձ յարաբերութիւնը։

Պէտք է խոստովանվել որ երկուսի մէջ բանակռիւը օրից օր սաստկանում է, բայց ամենևին չէ պարզվում։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Ապրիլի 6-ին

Երէկ առաւօտեան ժամը 10-ին Նօբէլի գործարանում պատահեց մի դժբաղդութիւն. նաֆթի կաթսաներից մէկը ճայթելով վիրաւորեց և սպանեց մի քանի գործաւորներին, 4 հոգի մեռած են արդէն և մի հայ մահամերձ է. մեռնողներից 2-ը ռուս, և 2-ը Թուրք են, ասում են։ Կաթսայի ճայթիւնից բարձրացած հրդեհը, որ յառաջանալու վրայ էր, հրդեհաշէջ մեքենաների միջոցով հանգցվեցաւ. այդ մեքենաները իրանց բոլոր պատրաստութեամբ ունի Նոբէլը իր գործարանում, և ջուրը ստանում է նաստօսով ուղղակի ծովից. ուրիշ գործարաններ այդ յարմարութիւնները չունեն։

Այս տարի Զատկին մի նոր անկարգութիւն չը պատահեց. պօլիցիան ամենայն խստութեամբ հսկում էր ճանապարհների վրա. միայն մի քանի սպանութիւններ տեղի ունեցած են անյայտ չարագործներից։ Զատիկ երկուշաբթի օր մի ռուս է եղել սպանված, իսկ մօտ օրերումս գտել են երկու սպանված Թուրքերի դիակներ։

Մանգալով այստեղի ծխախոտի գործարաններում, չեմ կարող այդ մասին մի բան չասել. գործարաններից մաքրութեան և օդի փոքր ինչ լաւութեան կողմից լաւ են Միրզաբեկեանցի և Յ. Տէր-Գրիգորեանցի նոր բաց արած գործարանը։ Այս վերջինը բաւական կանոնաւոր և մաքուր է. իսկ մնացածները գործարան անուն կրելու անդամ արժան չեն. մի խաւար լաբիւրինթոս, անթափանց պատուհաններով. օդը խեղդելու չափ վատ է, մանաւանդ ծխախոտի հոտը. 30, կամ 40-ի չափ գործաւորներ (մեծ մասամբ հայ պատանիներ) սղմված նստած են մի այնպիսի մութ և փոքր սենեակի մէջ, որի օդը շատ դժուարութեամբ և կարող եմ ասել չէ էլ փոխվում։ Այդ մասին ցանկալի էր գործարանատէրերը փոքր ինչ ուշադրութիւն դարձնէին առողջապահական կէտի վրա, քանի որ մի հինգ բոպէի համար մտնող անտեղեակ մարդը զգում է մի սաստիկ ծանրութիւն իր սրտի վրա, չեմ կարծում որ այդ բաւականին չը վնասէ գործաւորներին, մանաւանդ որ նրանցից շատերը պատանիներ են. այստեղ գլխաւորապէս ես նկատում եմ պ. Շ....եանցին։

Այս երեկոյ սիրողների մի խումբ բարեգործական նպատակով «Մարդասիրական ընկերութեան» դահլիճում տուեց մի ներկայացում՝ «Վասակ» և Ալէքսանդր Աբելեանցի հեղինակութեան մի վոդեվիլ «Պանդոկապետ»։ Ներկայացումը գլխաւորապէս Մօսկվայում լինող մի չքաւոր երիտասարդի համար էր, որի հարուստ բարեկամների հետ մենք ծանօթ ենք Շուշում. չէր վայելի այդ պարոններին թողել առանց օգնութեան իրենց մի չքաւոր ազգականին և օգնել միայն օտարներին։ Սաֆիրազեանցի խումբը, Բագուի մէջ մի քանի ներկայացումներ տալուց յետոյ ուղևորվեցաւ Թիֆլիս. բայի տիկ. Փառանձեմից, որ այս օրերս կը ճանապարհվի։ Բագուի հասարակութիւնը շատ լաւ վերաբերվեց դէպի Սաֆիրազեանցը և նրա խումբը. շատ ցանկալի էր, որ նա իր խմբով կազմէր այստեղ մի կանոնաւոր մշտական խումբ. այդ պակասութիւնը զգալի է այժմ այստեղ. հասարակութիւնը սովորել է թատրոնին և նա միշտ յաճախում է։ Լսում ենք, որ Թիֆլիսի մեծ. դերասան պ. Աղամեանց մտադիր է մի ամսաչափ անցնել այստեղ. շատ ուրախալի էր մեզ համար այդ և պարոնը մեծ յաջողութիւն կունենար այստեղ։

Անցեալներում կարդացինք լրագիրներում, որ Ներին Բարձրութիւն Թագաւորաղն իշխան Զալա սուլթան, Սպահանի հայոց առաջարկել է իր հաշուով մի հայ լրագիր հրատարակել. երանի թէ դա ճշմարիտ լինէր. բայց ցաւում և ափսոսում ենք որ այդ առաջարկութիւնը արված է ով գիտէ էլի ինչ տեսակ անհոգ և թուլամտրթ հոգևորականներից։ Ցանկալի չէր արդեօք, որ Պարսկաստանի մէջ մտածող ազգայինք հետևէին այդ բանին, քանի որ Պարսկաստանում մի հայ լրագիր ունենալը անհրաժեշտ է. թող ինչ ուզում են ասեն։

Ազքատ դասից մի կին մի երեխայ է ծնել, որի ամուսինը նրան արտաքսած է. կինը ապրում է իր մօր մօտ սարսափելի թշուառութեան մէջ, մինչդեռ ամուսինը բաւական ապրուստ ունի. ինչու համար հոգևոր կառավարութիւնը դրա վրա ուշադրութիւն չէ դարձնում։ Կարծեմ խեղճ կինը զրկված է այստեղի քահանաներից մէկին։

Աբել Ապրէսեանց

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

—

Մարտի 10-ին

Աւետաբեր գարունը մեզ նուիրեց անսանկնկալ սիրպրիզ—առատ ձիւն և ցուրտ։ ամսիս 6, 7 և 8-ին ոչ ոք էր համարձակում տանից դուրս գալու մրրկի և ձիւնի պատճառով. քաղաքում կուտած է ձիւնը կէս արշին բարձրութեամբ. քամուլցրած մի քանի փողոցներում անցուդարձը դժուարացած է. ճանապարհի հաղորդակցութիւնը այս օրերս ընդհատված են։ Առողջապահական կողմից բոլորովին անուշադիր է թողված քաղաքը։ Ախոռներից ազրը դիզում են Մարտաղայ ձորակում (որը բազմամարդ և քաղաքի երկու երեսի փողոցների մէջ տեղ է գտնվում). ամեն ապականութեանց կենտրոնն է այդտեղ, թէև այժմս ձիւնը ծածկել է, բայց ծաղիկների անուշահոտութեան հետ, քաղաքացիք բազդ ունենալու են ծծել և այդտեղի գարշելի օդը։ Ուսումնարաններում (նիթական միջոցի սղութեան պատճառով) այնքան են վառում, որ երեխայք ցրտից ենթարկվում են զանազան հիւանդութեանց. նոցա լուռ աղաչանքին լսող չը կայ։ Բարոյական դաստիարակութիւններից յափտանաս զրկված է հայ հասարակութիւնը. այստեղ երիտասարդութիւն (ուսուցիչներ) չը կայ. ուրեմն և չէ կարելի սպասել ազգային յառաջադիմութիւն. թատրոն, դասախօսութիւն (лекція) երաժշտական երեկոյ— դրանք երազական բաներ են։ Իսկ ազգային հիմնարկութեանց վրա մտածել, «ինչուա պէտք է» թող կորչեն ազքատները, թող փլչեն ուսումնարանները, միայն թէ վերջինների առատ եկամուտներից մի քանի հազարները իմ դրպանը զարդարեն։ Մինչդեռ, մեր ազգի ներկայ ազքատների վրա հոգալ կարող չենք, ի հարկէ և հեռուից լսած արձագանքներս—օգնել Միացեալ ընկերութեանց, նպաստել բարեգործական ընկերութեան, քաջալերել ազգի բարեկամաց, բաժանորդագրվել տաճկահայոց դատը պաշտպանող օրգաններին և այլ այդպիսի պարտաճանաչութեանց, մեզ անծանօթ և անմիտ բաներ են, առաջին գործի դեկավարող բարեխիղճ առաջնորդներ չունենալով և երկրորդ՝ հաւատարմութիւն չընծայելով այնպիսեաց՝ որք ժողովրդի նուիրած լուման առանց հետևանքի են թողնում, կամ մի այլ նպատակի գործածում։ Քաղաքը յուսահատութեան մէջ է,—առևտուրը ընկած է. շատերը այն յոյսով են ապրում, իբրև թէ Ախալցխան նահանգական քաղաք (губернія) լինելու է։ Մթերքների գները համեմատելով անցեալ տարիների հետ, բաւական արժան են, օրինակ ալիւրը տեղական 70—90 կ., իւղն կարագ 9 ր. 50 կ., իւղը 9 ր. 50 կ., կարտոֆիլ 30 կ. պուդը, միսը 9 կ. ֆունտը, պանիր 10 կ., ձուն 4 հատը 5 կ. և այլն։

Ս. Ս.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

Ապրիլի 1-ին

Խօսելով ձեր լրագրի այս տարվայ 34-րդ համարում մեր հասարակական գործողների անհերելի թուլութիւնների մասին և հանդիսացնելով այնտեղ մի քանի տխուր երևոյթներ մեր հասարակական կեանքի, խոստացել էի մնացեալ ասելիքս թողնել հետևեալ անգամի։ Ես կը խօսեմ, այս անգամ, դարձեալ մեր հասարակական այնպիսի կարևոր հիմնարկութեանց վերաբերութեամբ, որոնք մեր քաղաքային պահանջների շրջի մէջ բռնում են մի առաջնակարգ, պատուաւոր տեղ։

Շատ վաղուց է, որ Ալէքսանդրապօլում սիպողական պահանջ է դարձել, ամենայն տարի, մի քանի թատրոնական ներկայացումներ տալու սովորութիւնը։ Ես լաւ յիշում եմ, սրանից, մօտաւորապէս, դեռ 17 տարի առաջ, կազմակերպվեցաւ մեզանում տեղական երիտասարդներից մի թատրոնասիրաց խումբ, մշտական ներկայացումներ տալու նպատակաւ, որ ունեցաւ և մի հաստատուն բեմ, իր բոլոր պարագաներով։ Մի քաղաքային թատրոն ունենալու մտադրութիւնը մուտք գործեց մեր հասարակութեան մտաւոր կեանքի մէջ դեռ այն ժամանակից, երբ պ. Շահխաթունն իր խրոխտ ձայնով զզրդացնում էր մեր թատրոնական բեմը պատմական պիեսների «ահ» ու «աւանդներով»։ Երբ մեր տգէտ և նախապաշարված օրիորդները նախատինք համարելով իրանց բեմական արհեստը, մի արհամարհական բացասութեամբ, հրաժարվում էին մասնակցել այդ ներկայացումներին և նրանց փոխարինում էին թատրոնական բեմի վրա օրիորդատիպ պատանիները։ Երբ Թիֆլիսից արժանայիշատակ Ամերիկեան և պ. Գ. Զմշկեան այցելելով մեր քաղաքը, մասնակցում էին տեղական խմբի ներկայացումներին, տալով նրանց մի առանձին փայլ ու շուք։ Այն ժամանակներից մինչև հիմայ շատ և շատ անդամ կազմվեցան մեզանում խմբեր, երբեմն տեղացի երիտասարդներից, երբեմն օտարական տարրից, որոնք տուել են և տալիս են մինչև այսօր շարունակ, իւրաքանչիւր տարի, մի քանի ներկայացումներ, բայց այդ խմբերից ոչ մէկը չը գտնելով հասարակութեան կողմից նիթական մի զգալի նպատակ և բարոյական խրախոյս, անյոյս և խոր-

տակված կանդ առեցին կէս ճանապարհի վրա իրանց նպատակի առաջ։ Այս 17 տարվայ ժամանակամիջոցում քանի՞ ու քանի՞ ընդունակութիւններ փայլեցին մեր բեմական հորիզոնի վրա որպէս լուսաւոր աստղեր, բայց նոքա բոլորն էլ հանդիպելով մի անյաղթելի արգելքի՝ հասարակական սառն անտարբերութեանը, ստիպվեցան ձեռք քաշել բեմական գործից և խեղդվեցան ու անհետացան ամբոխի ընդհանուր հոսանքի մէջ։ Այս 17 տարվայ ընթացքում մեր հասարակութիւնը անընդունակ գտնվեցաւ ըմբռնելու թատրոնական հիմնարկութեան կրթողական նպատակը և մեր հարուստները գործնականապէս ապացուցին, որ նուիրել մի որոշ գումար Ալէքսանդրապոլում թատրոնի կառուցման համար, դեռ շատ վեր է իրանց հասկացողութենից, իրանց մտաւոր զարգացման մակերևոյթից։

Որպէս մի քաղաքային թատրոն ունենալը, նոյնպէս և մի գաւառական թերթի հրատարակութիւնը մի անհրաժեշտ կարիք է մեր հասարակութեան համար։ Անցեալ տարի մի համալսարանական պարոն կամենում էր սկիզբ տալ մի այդպիսի թերթի հրատարակութեան։ Նա հաշուել էր տարեկան ծախսը հրատարակութեան 800 ռուբլի։ Իր բնակարանի սենեակներից մտադիր էր յարմարացնել մի երկուսը խմբագրութեան համար։ Թերթի տարեկան բաժանորդագինը պէտք է լինէր 4 ռուբլ։ 200 բաժանորդ բաւական էր գտնում իր չաբաթաթերթի հրատարակութեան համար։ Նա առանձին հրճուանքով էր խօսում այն նպաստաւոր միջոցների վրա, որոնցով հեշտանում էր իր թերթի հրատարակութեան գործը։ Նա նախագծում էր առանձին ոգևորութեամբ իր առաջիկայ ձեռնարկութեանց նախագիծը յօգուտ տեղական յառաջադիմական տարրի։ Ցանկարծ փչեց մի հակառակ թոյլ քամի և մեր գիտուն համալսարանականը երերաց, տատանվեց իր անհաստատ քայլերի վրա։ Փչեց թոյլ քամին և մեր համալսարանական պարոնը տապալեցաւ գետին իր բոլոր նպատակներով և հասարակական զօրեղ հեղինակութեամբ։

Միայն մի խնդիր, մի կարևոր հասարակական խնդիր, որի մասին կարելի է ասել, թէ արդէն ստացած է իր վերջնական լուծումը, կամ աւելի խոհեմութիւն կը լինէր ասել, որ արդէն մօտ է իր վերջնական լուծմանը,—դա մեզանում՝ «միջնակարգ դպրոց» ունենալու հարցն է։ Վերջին անգամ փետրվարի 14-ին տեղական կլուբի դահլիճում 2,400 ստորագրութեամբ կայացրած հասարակական վճիռը մեր քաղաքում «բէալական դպրոց» հիմնելու մասին պ. նահանգապետը գտել է կանոնաւոր և անփոփոխելի, որը չուտով կը ներկայացվի ազգային լուսաւորութեան նախարարի հաստատութեանը կովկասեան ուսումնարանների հոգաբարձուի միջնորդութեամբ։

Վերջացնում եմ նամակս հաղորդելով մի թեթև ուրախալի լուր մեր հասարակութեանը։ Մեր այժմեան գաւառապետի պաշտօնակատար պ. Վ. Շահխաթունեանց մտադիր է այս տարի գարնանը, հասարակութեան հաճութեամբ, քաղաքի մէջ ընտված մի բաց տեղի վրա տնկել հասարակաց պարտէզ։ Շատ գովելի է այս մտադրութիւնը, ըստ որում մեր քաղաքը չունի ոչ մի հասարակաց ըղբօսարան, բացի «Զարքեալի» ձորում գտնված ծառաստանից, որ մի անյարմար ղբօսատեղի է իր հեռաւորութեան պատճառով։

Պ. Վ. Շահխաթունեանց ցոյց է տալիս, առհասարակ, մի գործնական եռանդ մեր հասարակական խնդիրների և պահանջի վերաբերութեամբ։ Նրա գործադրած միջոցների շնորհիւ շատ սակաւ են պատահում այժմ զիշերային աւազակութիւններ։ «Բէալական դպրոցի» հարցի վճռողական մղում տալու խիզիատիվը պատկանում է նրան։ Այո, նա ունի գործելու յատկութիւն և այս է պատճառը, որ մեր հասարակութիւնը ցանկանում է տեսնել նրան, որպէս մեր քաղաքի գաւառապետ, որը այնքան համապատասխանում է նրա ժողովրդական ոգուն և եռանդոտ գործնական բնաւորութեանը։

Ցեղացի

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Մարտի 5-ին

Այստեղ երկու չաբաթ է սկսել են գլուխ բարձրացնել աւազակութիւնները։ Իսկ Շուշուց մի 15 վերստաչափ հեռու անյայտ չարագործներից ըսպանված մի թուրքի դիակ են գտել առանց զըլխի։ Երևի գլուխը խոստացել են մէկին և գուցէ այդ անշնչացած գլխին վիճակված է տեսնել աւելի մեծ բարբարոսութիւն։

Թուրքերի հրապարակում երեք օր առաջ մի խեղճ գիւղացի երիտասարդ զոհ դարձաւ անբարոյականութեան։ Հարբած կօզակի (козакъ) վրա մի քանի թուրք անկիրթ երեխաներ քար են ձգել, իսկ սա, իր մօտով անցնող անմեղ գիւղացուն իր վրա քար ձգողներից մէկը ընդունելով, խրում է դաշոյնը նրա կուրծքը, որից և թշուառը մեռնում է։

Քաղաքիս նեղ փողոցները շատ անմաքուր են, մանաւանդ բաղմամարդ Թոփխանի (հրապարակ) աջ ու ձախ գտնվող նեղ փողոցները։ Կղկղանքից յառաջացող գարշահոտութիւնը մեծ է։ Եթէ արտաքնոց չինելը այդպիսի տեղերում անհնարին է, դէթ մաքուր պահվէին։ Գարունք է, ահա օրերը կը տաքանան, եթէ հարիւրաւոր անմեղ երեխաների կեանքը թանդ է «առողջապահական մանաժողովի» համար և չէ կամենում անցեալ տարվայ մանուկների կոտորածը, թող հսկէ քանի ուշ չէ։

Նորերս այստեղ նոր բացվելիք կլուբի կանոնադրութիւնը մշակելու համար ընտրվեցաւ մանաժողով։ Ցանկալի էր, որ կլուբը այստեղ ևս անմիտ զուարճութիւնների տեղի չը դառնար և նրա մեծ պարապմունքը ընթերցանութեան տեղ չը լինէր թղթախաղութիւնը։—Շուշին այսուհետև կունենայ երկու կլուբ. քաղաքային և զինուորական—մօտի՞ կանանց խօսքով սա յառաջադիմութիւն է։

Մինչև այժմ եղածը զինուորական (военный) էր, սակայն այդ տեղ յաճախում էին, ինչպէս ասում են, «երկու ջուխտ մի կէնտ» զինուորականներ, աւելի չը լինելու պատճառով։ Քաղաքային այդպէս չի լինի. սորա անդամների թիւը շուտով 100-ի կը հասնի։ Անդամակցական վճարը 15 ռ. է։ Բոլոր անդամները համարեա հայեր են։ Նոր կլուբի սկզբնաւորութիւնը (խիզիատիվը) պատկանում է բէալական դպրոցի դիրեկտոր պ. Նիբելինգին։

Բէալական դպրոցի ուսուցիչները սիրողների հետ այս չաբաթ մի ռուսերէն ներկայացումն են մտադիր տալ։ Ռուս սիրողները, բարեկենդանների հայոց բեմի վրա ներկայացումն տալով անվարձ, խոստացել էին երկրորդ ներկայացումից գոյացած գումարը յատկացնել հայոց սեմինարիային. այժմ նրանք այդ երրորդ ներկայացմանը ձգելով. ինչպէս լսում ենք, հոգաբարձութիւնն էլ բեմը ամենայն իրաւամբ չէ տալիս ներկայացման համար։

Փետրվարի 28-ին, կիրակի օրը, հայոց օր. դպրոցի դահլիճում կատարվեցաւ նախորդ երեք տարիներում աւարտած 22 աշակերտուհիների մրցանակաբաշխութեան հանդէսը։ Դպ. տեսուչ պ. Առաքելեան կարդաց 1881—1882 թուականի ուսումնական հաշիւը։ Հոգաբարձութիւնը նոյնպէս ուներ հաշիւ անտեսական մասին վերաբերեալ։ Մանրամասն այս մասին պէտք է, որ «Գործ» ամսագրում լինի։ Պ. Ս. Հախումեանը բերանացի շատ պարզ, բայց յարմար խօսեց, որի համար և հանդիսականներից ծափահարութեան արժանացաւ։ Հանդիսականների համարեա կէսը կանայք էին։ Դահլիճի պատերից կախված և սեղանի վրա դրված էին օր. ձեռագործները, որոնց մասին վիճակախաղը Զատկի չաբաթին է թողած։ Մեծ արդիւնք է սպասվում վիճակախաղից։ Հոգաբարձութիւնը տոմսակների մի մասը ուրիշ քաղաքներ էլ է ուղարկել։ Ա. այժմ տոմսակների մեծ մասը ծախված է։

Բարեգործական ընկերութեան անդամների և անդամուհիների թիւը 70-ի է հասել։

Փետրվարի 28-ին, տեղական վարչութեան անդամների և փոխ-անդամների ընտրութեան համար երկրորդ ժողով կայացաւ, որովհետև առաջին ժողովի ընտրութիւնից դժգոհ էին ոմանք մի քանի պատճառներով։ Ժողովը ընդհանուր ժողովի նախագահ համարեա միաձայն ընտրեց ս. Անդրէաս եպիսկոպոսին։ Վարչութեան անդամներ ձայնից բաղմութեամբ ընտրվեցան պ. պ. Քալանթարեան, Ադամեան, Տէր-Մկրտչեան, Աղայեան և Համբ. Առաքելեան, իսկ փոխ-անդամներ պ. պ. Սահակեան, Առստամեան, Խունունց, քարտուղար պ. Հախումեանց։ Ժողովին ներկայ էին 50-ի չափ անդամներ։ Շատերը դրսից կանոնադրութեան անծանօթ լինելով ժողովը սկզբում հարց ու փորձով զբաղեցրին։ Կանոնադրութիւնը փոխանակ ժողովում բաժանելու աւելի լաւ կը լինէր, եթէ օր առաջ ուղարկվէր անդամներին, որպէս զի սրանք աւելի միջոց ունենային նրա հետ ծանօթանալու։

Ծննդեան և զահակալութեան տօնի պատճառով Շուշին ուրախ կերպարանք էր ստացել։ Թոփխանում «մաչալա» (иллюминація) էր և նրա շուրջ գտնվող շինութիւններից կախված էին գոյնզգոյն գրօշակներ, լուսաւորված ճրագներով։ Զուռնաները մուսացութեան էին տուել սըգաւոր մեծ պասը «Կապոյտ երկնքում, աստղեր են փայլում» ածելով, սակայն միդասատ Շուշու միշտ տխուր երկինքը առատ ձիւն էր թափում նրանց և նրանց շրջապատող հետաքրքիր երեխաների գլխին։ Սեպտեմբերից սկսված ձիւնը դեռ մինչև օրս չարունակում է գալ։ Շատ փայտի փող տալուց զրպանները-ս փող չը մնաց։

Զ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Երևան, 2 ապրիլի

Սրա հետ ուղարկում եմ ձեզ 62 ռուբլ, որից 56 ռ. խնդրեմ յատկացնել որպէս բաժանորդագին «Ժուրնալ դ'Օրիանի» համար և բերել տալ այդ լրագրի համարները հետևեալ դպրոցների անունով. երեք օրինակ Երևանի երկու օրիորդական և մի տղայոց ազգային ուսումնարանների համար, մի օրինակ Իգդիրի ուսումնարանի, մի օր. Գօրու ազգային դպրոցի, մի օրինակ Մակուի հայ դպրոցի և մի օրինակ Հին-Նախիջևանի ազգային դպրոցի անունով։

Այդ գումարը գոյացել է թատրոնասէրների ներկայացումից։ Խումբը յայտնում է իր շնորհակալութիւնը պ. Մովսէս Մովսէսեանցին իր անվարձ աշխատանքի համար։ Գումարի մնացած 6 ռուբլ, որ նուիրեցին Ա. Տէր-Մարուքեան 3 ռ., Ա. Սարգսեան 1 ռ., Եպոր Մուսաբէգեան 1 ռ., և Թ. Մ. 1 ռ., ընդամենը 6 ռուբլ, խնդրում ենք յատկացնել Վանի կենտրոնական վարժարանի աղքատ աշակերտների օգտին։

Թոմաս Մէհերեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Բագու, 7 ապրիլի

Հրապարակագիս շնորհակալութիւն եմ յայտնում յայտնի գործարանատէր պ. Աբրահամ Սաբումեանցին, որ առանց անձամբ ծանօթ լինելու մեզ, տեղեակ լինելով մեր պ. Բեկլարեանցի հետ ունեցած գործի մէջ իմ արդարութեանը, քննիչի մօտ գործը քննվելուց յետոյ, մինչև դատարանում այդ գործի քննվելը ինքը 3,500 ռուբլու երաշխաւոր եղաւ, մինչդեռ մենք այստեղ ոչ մի մօտ ազգական չունէինք. պարոնը միմիայն մեզ ծանօթ էր «Մշակից»։

Աբել Դաւթեան Ապրեսեանց

ՆԵՐԲԻՆ ԼՈՒԻԵՐ

Մինչև այսօր մենք ունէինք խմբագրութեան մէջ «Ժուրնալ դ'Օրիանի» համար բաժանորդագին 100 ռուբլ։ Այժմ ստանալով Երևանից 56 ռուբլ այդ լրագրի համար բաժանորդագին, ընդամենը կունենանք 156 ռուբլ։

—

ԵՐԵՒԱՆԵՑ մեզ գրում են։ «Մի տարուց աւելի է որ Երևանի բազարի վերահսկողութեան պաշտօնը (բազար-բաշի) վարում էր պ. Խաչատուր Խաչատրեան, որի գործունէութենից ամենքը գոհ էին։ Մի առաւօտ պարոնը գալիս է բազար և տեսնում է հրապարակի վրա ուրիշ բազար-բաշուն, յայտնի Նասիր-բէգին։ Պ. Խաչատրեանը հրապարակից հեռանում է և անմիջապէս հրաժարական է տալիս։ Ցայտնվում է որ առանց Խաչատրեանցին հարցնելու, թուրք ձայնաւորներից մէկը կամայականութեամբ նշանակել է տուել իր համար աւելի հաճելի մարդուն բազարի վրա վերահսկող։»

—

Ցիշեցնում ենք ընթերցողներին որ այսօր, ապրիլի 14-ին, լինելու է Արծրունու թատրոնում պ. Ա. Թոխմախեանի դասախօսութիւնը։ Ասում են պարոնի դասախօսութիւնը լինելու է շատ հետաքրքիր, քանի որ նա խօսելու է Պարսկա-Հայաստանի վրա, որ առհասարակ մեզ շատ քիչ է ծանօթ։

—

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են որ ապրիլի 6-ին Գօրու յաջորդ գեր. Գարեգին վարդապետ Սաթունեանց հրաւիրեց քաղաքի հայ հասարակութեան նշանաւոր անձինքներին առաջնորդարան, տեղի երկսեռ հայ դպրոցների վիճակը բարելաւելու մասին խորհրդակցելու համար։ Ժողովին ներկայ էին և դպրոցի հոգաբարձուները։ Եւ ինչ էք կարծում, աւելացնում է մեր թղթակիցը։ Հոգաբարձուները, որոնք մասնաւոր խօսակցութեան մէջ խոստացել էին հայր սուրբին օգնել նրան իր նպատակի մէջ, այժմ, ժողովի ժամանակ, աշխատեցին քանդել նրա դիտաւորութիւնները և ժողովը ցրվեց առանց որ և է հետևանքի հասնելու։ Հոգաբարձուները, որոնցից երկուսը շատ հարուստ մարդիկ են, իսկ երրորդը մի բժիշկ է, ոչ թէ միայն իրանք յանձն չառան ստորագրութիւն բաց անել յօգուտ դպրոցի, բայց և ամեն ջանք գործ դրին որ համոզեն ժողովուրդը հայոց դպրոցի բարելաւութեանը չօգնելու։ Առհասարակ Գօրու հայերը միշտ շատ թշնամական կերպով են վերաբերվում դէպի ազգային կրթութեան գործը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՐԲԻԱ

Բէլգրադից „Polit. Corresp." լրագրին գրում են ապրիլի 3-ից։ Սերբիան թագաւորութիւն յայտնելը աւելի մեծ և խորը տպաւորութիւն գործեց ազգաբնակութեան ստորին դասերի վրա, քան թէ բարձր շրջանների վրա։ Այդ բանը պարզ երևում է մի շարք պատգամաւորութիւններից, որոնք երկրի բոլոր կողմերից շտապում են գնալ մայրաքաղաք նոր թագաւորին ժողովրդի ուրախութիւնը և շնորհակալութիւնը յայտնելու համար։ Ամենամեծ պատգամաւորութիւնը, որ բաղկացած էր 130 անդամներից, ուղարկվեցաւ Կրայինի նահանգից։ Սերբիական թագաւորը իր հաւատարիմ կրայինցիներին ընդունեց մեծ դահլիճի մէջ, որտեղ սովորաբար տեսակցութիւններ են լինում թագաւորի հետ։ Պատասխանելով պատգամաւորների ճառին, Միլան I թագաւորը յայտնեց, որ նա իր փառքը համարում է իր ազգի վերականգնելը, որին կարելի է հասնել անդադար և եռանդոտ կուլտուրական աշխատանքով։ Սերբիային ամեն տեսակ ազատութիւններ կը շնորհվեն, եթէ հասարակական կարծիքը կապահովէ կարգապահութիւնը և օրէնքների կատարելը։ Թագաւորը խօսում էր, ոչ թէ միայն իբրև իր ժողովրդի իրաւունքների պաշտպան, այլ և ինչպէս մի թագաւոր, որ խոստացել է եւրոպային կատարել Սերբիայի յանձն առած պարտականութիւնները։ Պաշտօնական ընդունելութենից յետոյ պատգամաւորներին հիւրասիրեցին պալատի մէջ։ Վերջը թագաւորը խնդրեց պատգամաւորներից յայտնել առաջին սերբի ողջոյնը իր բոլոր եղբայրակիցներին։

ԲՕՍՆԻԱ և ՀԵՐՑԵԳՈՎԻՆԱ

Վիէննայի մէջ Բօսնիայի և Հերցեգովինայի ապստամբութիւնը վերջացած են համարում, գրում է „Голосъ" լրագիրը։ Կառավարութեան կողմից աւստրիական պատգամաւորների ժողովին արած զեկուցման համեմատ, ապստամբները յաղթված են թէ նիւթապէս և թէ բարոյապէս։ Զեկուցումն յայտնում է, որ Բօսնիայի և Հերցեգովինայի մէջ միմիայն աւազակների խումբեր են մնացել, որոնցից պէտք է պաշտպանել խաղաղ բնակիչներին։ Արդեօք ճշմարիտ այդպէս է գործերի դրութիւնը, թէ կառավարութիւնը դիտմամբ է այդպէս նկարագրում, որպէս զի պատգամաւորների ժողովից ստանայ պահանջած կրեդիտը 23,733,000

գուլդենի, դա մեծ զանազանութիւն չէ ներկայացնում: Անկասկած է միայն, որ ապստամբների ոյժերը ճնշված են և ապստամբութեան աջողութեան վրա յուսալը նրա առաջնորդների կողմից ինքնախաբէութիւն կը լինէր:

Այդպիսով ապստամբութիւնը վերջանում է: Բայց միայն ներկայումս աւստրիական կառավարութիւնը ծանօթացաւ ապստամբութիւնը ծագեցնող պատճառների հետ, միայն այժմ իմացաւ, որ աւստրիական զօրքերով գրաւած Թիւրքիայի նահանգների բնակիչների դրութիւնը անտանելի էր, որ ինքը կառավարութիւնը իր գործած ճնշումներով, վարչական և ֆինանսական անմիտ կարգադրութիւններով ապստամբութիւնը անփախչելի դարձրեց: Երբ աւստրիական կայսրի հրամանի համեմատ հետաքննութիւններ կատարվեցան Բոսնիայի և Հերցեգովինայի ապստամբութեան պատճառներն իմանալու համար, քննիչները այդպիսի եզրակացութեան հասան:

„Neue Freie Presse“ լրագրի թղթակիցը Մոստարից ծանօթացնում է մեզ այն պատճառների հետ, որոնք ապստամբութիւն ծագեցրին աւստրիական կառավարութեան դէմ և որոնք պաշտօնապէս ճանաչված են կառավարութեան կողմից:

Ինչպէս և պէտք էր յուսալ, աւստրիական ատրճանաւորները չը կամեցան իրանց կառավարութեան անաջող քաղաքականութիւնը ապստամբութեան պատճառ համարել: Նրանց կարծիքով, այդ անաջող և անարդար քաղաքականութիւնը միայն անբաւականութիւն պատճառեց և թելադրեց ազգաբնակութեանը հետևել զանազան խռովարարների դրդումներին: Բայց ապստամբութեան գլխաւոր պատճառը իբր թէ ուղղափառ կուսակցութեան ձգտումն է՝ վայր դցել աւստրիական լուծը և նահանգներից մէկը միացնել Սերբիայի հետ, իսկ միւսը Ջերնոգորիայի հետ: Ապստամբութենից ստացված փաստերից պարզ երևում է, որ նրան մասնակցում էր Բոսնիայի և Հերցեգովինայի քրիստոնեայ և մահմեդական ազգաբնակութիւնը: Իսկ մահմեդականները երբէք չէին համաձայնի պատերազմել և արիւն թափել Սերբիայի կամ Ջերնոգորիայի հպատակներ դառնալու համար: Ուրեմն ապստամբութիւնը ծագեցրին ոչ թէ այն խռովարարները, որոնք աշխատում էին Բոսնիան և Հերցեգովինան Սերբիայի և Ջերնոգորիայի հետ միացնել և ոչ թէ ռուսաց „բուբլիները“, որոնցով իբր թէ պահպանվում էր ապստամբութիւնը, այլ այն տխուր պայմանները, որոնցով շրջապատված էին այդ նահանգները աւստրիական կառավարութեան ընդհին: Այդ պայմանները այնպէս են, որ բոլորովին հարկաւոր չէ դիմել ռուսաց բուբլիներին և ուղղափառ կուսակցութեան ձգտումներին իմանալու համար, թէ ինչը ստիպեց հերցեգովինցիներին և բոսնիացիներին զէնք առնել և պատերազմել աւստրիացիների դէմ:

„Neue Freie Presse“ լրագրի Մոստարի թղթակցի խօսքերի համեմատ ապստամբութիւնը ծագեցնող ապացուցված պատճառներին պաշտօնական տեղեկութիւնները աւելացնում են և հետևեալները. աւստրիացիների մոցրած դանդաղ և անբաւարար դատաստանավարութիւնը, հարկերի հաւաքելու ձևը, որ անուշադիր էր թողնում ազգաբնակութեան աւանդութիւնները, սովորութիւնները և առանձնայատկութիւնները, մանր անասունների վրա անմիտ հարկերի դնելը, համայնքներից չը մշակված հողերի, արօտատեղիների և անտառների խլելը յօդուտ պետութեան, անտառապետների անողոք խստութիւնը և այլն: Ցոյց են տրվում և այլ պատճառներ, որոնց թղթակիցը առաջ չէ բերում: Այդ պատճառներից մեծ դեր են խաղում հողային հարցը և վարչական վատ ձևը: Դառնութեան բաժակը լցնող վերջին կաթիլը, պաշտօնական խոստովանութեան համեմատ, Բոսնիայի և Հերցեգովինայի մէջ պարտադիր զինուորագրութեան մացնելն էր:

Իր ժամանակին մենք մի անգամ յայտնեցինք, որ աւստրիական վարչական անգութ ձևը մանաւանդ ուղղափառ ազգաբնակութեան վերաբերութեամբ Բոսնիայի և Հերցեգովինայի մէջ բարի հետևանքներ չի ունենայ և բոլորովին չը զարմացանք, երբ ապստամբութեան մասին առաջին լուրերը ստացանք: Այդ լուրերը զարմանալի չէին և Եւրոպայի այն մասերի համար, որտեղ փոքր ի շատէ հետաքրքրվում էին Բերլինի դաշնագրի որոշման համեմատ աւստրիական հոգաբարձութեանը յանձնված ազգաբնակութեան վիճակով: Մենք միայն կարող ենք ուրախանալ, որ աւստրօ-ունգարական կառավարութիւնը պաշտօնապէս խոստովանեց իր սխալները և, ինչպէս երևում է, ցանկանում է նրանց ուղղել: Աւստրիան այժմ ցանկանում է այդ նահանգները վերջնականապէս իր հետ միացնել և նրանց մէջ սովորական պետական կարգերը մացնել: Բայց այդ հարցը աւստրիական կառավարութեան իրաւասութենից դուրս է: Բոսնիան և Հերցեգովինան որ և է պետութեան հետ միացնելը միջազգային հարց է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Presse» լրագրին Փարիզից գրում են մարտի 31-ից: Ֆրանսիական կառավարութիւնը յայտարարեց, թէ նրանք բոլորը, որոնք չեն ցանկանայ ենթարկվել ուսումնարանական նոր օրէնքներին, և դէպի անհնազանդութիւնը կը դրդեն ուրիշներին, դատաստանի կենթարկվեն, իսկ այն պաշտօնեաները, որոնք կը ծածկեն կամ կը թալատան այդպիսի բողոքներ, անյապաղ տեղից կը զրկվեն:

—«Republique Franc.» լրագիրը մարտի 31-ից հաղորդում է հետևեալ տեղեկութիւնները Արաբի-էֆէնդի կեանքի դէմ դատաստանի մասին: Մի քանի չէրքէզ օֆիցէրներ, որոնք հրաման ստացան Սուդան ուղևորվել, ժողով կազմեցին մինիստրին խնդիրք տալու համար այն բանի մասին, որ իրանց Սուդան ուղարկելու հրամանը ոչնչացնէ: Ներկայ եղողներից մէկը այնքան տաքացաւ, որ սկսեց բէվոլվերը ձեռքին սպառնալիքներ անել Արաբի-փաշային: Մատնութեան զոհ դարձան նրանք. բոլոր օֆիցէրներին բանտարկեցին: Կարծում են, որ մինիստրը խիստ միջոցների կը դիմի ուրիշներին օրինակ ցոյց տալու համար:

—«Bombay Gasette» լրագրի խօսքերով, հնդկական կառավարութիւնը Կաբուլից լուր ստացաւ, որ ամբողջ Աֆղանստանում չուտով ապստամբութիւն կը ծագի: Աբդուրահմանը, ինչպէս ասում են, վախենալով, որ Անգլիան ստիպված կը լինի նոր էմիր նշանակել, սարսափելի կատաղում է, և ամեն միջոցներ գործ է դնում հեռացնել իր իշխանութենից Շեր-Ալիի, Եակուբի և Ահմէդ-Էյուբի կուսակիցներին: Իրաքանչիւր օր Աբդուրահմանը կալանաւորում է իր թշնամիներին, կուրացնում է, զանազան պատիժների և բռնաբարութիւնների է ենթարկում նրանց. մինչև անգամ այդպիսի երևոյթներին սովոր կարուլցիները սկսում են տրտնջալ և մահով կամ աքսորով են ազատում իրանց վրա իշխողին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Տասը հազար համբոյրներ: Տիւրինգի փոքրիկ քաղաքում այս օրերս մէկ օտարոտի գրաղ դրվեցաւ, որը քիչ մնաց դժբաղդութեամբ չը վերջացաւ: Մի հրաւէրքի ժամանակ ներկայ եղողների մէջ խօսակցութիւն բաց եղաւ համբոյրների մասին: «Հետաքրքիր կը լինէր որոշել, թէ որքան համբոյրներ կարելի է տալ և ստանալ որոշեալ ժամանակամիջոցում», հարցրեց մէկ պարոն: Շատ վիճեցին այդ առարկայի վրա. վերջապէս հիւրերից մէկը, երիտասարդ մարդ, որ նոր էր նշանվել, առաջարկեց փորձով վճռել այդ վիճելի կէտը: Նա 200 մարկ դրաղ եկաւ, որ տասը ժամվայ ընթացքում կը համբուրի 10,000 անգամ: Մէկ պայման միայն դրեց նա, որ իւրաքանչիւր կէս ժամում նա կերակուր կուտէ: Գրաղը ընդունվեցաւ. սկսվեցաւ թեթև, կարծես, ախորժելի աշխատանք: Առաջին ժամում երիտասարդ նշանածները 2,000 համբոյրներ տուին միմեանց, երկրորդում—1000, երրորդում.—750, յետոյ ընդմիջումն եղաւ. սիրահարվածների ուժերը թուլացան: Երիտասարդ մարդու շրթունքները սկսեցին ցնցվել, նա ուշաթափ ընկաւ: Նորահարսը նոյնպէս ուշաթափվեցաւ. երեկոյեան ջղային բորբոքումն ստացաւ: Բժիշկը մեծ դժուարութեամբ կարողացաւ ազատել նրան մահից: Վերջապէս բանը նրանով վերջացաւ, որ հարսանիքը մէկ ամբողջ տարով յետաձգեցին:

* * *

Լրագիրներում տպված է երևելի ֆրանսիացի գիտնական Բրնանի խօսակցութիւնը Բրանդէսի հետ: Խօսակցութիւնը երկար է և փիլիսոփայական նիւթի վրա է: Միայն հետաքրքիր է խօսակցութեան հետևեալ տեղը: Երբ Բրանդէս հարցրեց Բրնանին թէ նա ինչպէս է դիմանում այն անթիւ հալածանքներին, որոնք Բրնանի ամբողջ կեանքի ու գործունէութեան ժամանակ ուղղված էին այդ գիտնականի դէմ, Բրնան պատասխանեց: «Ես երբէք ոչինչ հալածանքի և յարձակմունքի չեմ ենթարկվել, որովհետև ես սովորութիւն ունեմ երբէք չը կարդալ այն բոլորը որ ինձ դէմ է գրվում, այդպիսով ես ամենահանգիստ կերպով անցնում եմ իմ կեանքս և ինձ դէմ ուղղված յարձակմունքներն ու հալածանքները չեղած եմ համարում:»

* * *

Ճշմարիտ անգլիացի: Նորերումս հրատարակված «Կօշուտի յիշատակարանի» երկրորդ հատորում պատմված է հետևեալ հետաքրքիր անեկդօտը, որը կատարելապէս ցոյց է տալիս անգլիական սառնասրտութիւնը և բարեխղճութիւնը: Ունգարական պատերազմից յետոյ Կօշուտը 5,000 գաղթականներով գտնվում էր Վիդինում: Նրա հետ էր իր ամենահաւատարիմ բարեկամներից մէկը՝ անգլիացի Գէննինգսօն: Գաղթականներին Աւստրիայի ձեռքն ընկնելու վտանգ էր սպառնում, և մտածում էին որքան կարելի է շուտով նամակ հասցնել Պալմէրստօնին խնդրելով, որ նա յօդուտ ունգարացիների միջամտութիւն անէ: «Այն ժամանակ, երբ մենք մտածութեան մէջ էինք, թէ նամակը ում ձեռքով պէտք է ուղարկել, պատմում է Կօշուտ,—մեր սենեակը մտաւ մէկ մարդ, որին չէր կարելի անգլիացի չընդունել. նա գլխին դրած ունէր բարձր գլխարկ, և կռան տակը պահած ունէր մէկ անագին հովանոց. նա գլխից մինչև ոտը թողով և ցեխով էր ծածկված: Երևում էր, որ նա հեռուից է գալիս, և շատ դաղրած է: «Բարով ձեզ, ջէնտլմէններ»—«Բարով պարոն, ինչ է՛ք կամենում:»—«Ես եկայ Հընդկաստանից Ունգարիայի ազատութեան համար պատերազմելու: Բայց, կարծեմ, շատ ուշացայ»:—«Դժբաղդաբար, այո. բայց նստեցէք խնդրեմ:» Նա նստեց, յետ քաշեց գլխարկը ծոծրակի վրա, ճակատի քրտինքը սրբեց, հովանոցը ոտների մէջ տեղը դրեց և սկսեց եղունգները սրբել: Գէննինգսօն ականջումս փախաց. «Ահա մեր սուրհանդակը»:—«Միթէ դուք նրան ճանաչում էք:»—«Ոչ, բայց նա անգլիացի է, և դա բաւական է»: Մօտենալով անծանօթին, Գէննինգսօն ասեց նրան. «Լսեցէ՛ք պարոն: Դուք անցաթուղթ ունէ՞ք:»—Այո:—Փող ունէ՞ք:—Այո:—Ուրեմն դիտէ՞ք ինչ կայ: Այս բոպէիս խօսքը մեր կեանքի ազատութեան մասին է: Մեզ մէկ այնպիսի մարդ էր հարկաւոր, որը անյապաղ Լօնդոն ուղևորվէր, ոչ քնէր և ոչ հանգստանար, մինչև չէր յանձնի անա այս նամակը լորդ Պալմէրստօնին: Կամենում ք՞ մեզ այս ծառայութիւնը մատուցանել:»—«Տուեցէ՛ք», եղաւ պատասխանը: Ես տուեցի նրան նամակը, որ մեծ խնամքով դրեց իր ճանապարհապարկի մէջ, յետոյ դրստեց գլխարկը, վերցրեց հովանոցը, և «լաւ, մնաք բարև» ասելով, չտապով դուրս գնաց սենեակից: Քառորդ ժամ անգամ չանցաւ, որ մենք ձիու ոտնաձայն լսեցինք: Մի կազակի ուղեկցութեամբ, քաջ անգլիացին անարգել կերպով անցաւ երկրի միջով, չէր քնում, և չէր հանգստանում, նախ քան թէ կը կատարէր մեր յանձնարարութիւնը: Նամակը ցանկալի աջողութիւնը ունեցաւ: Բայց մենք չը գիտէինք, մեր բարերարի անունը. մինչև մէկ պատահական դէպքով չը յայտնվեցաւ: Երբ ես, Ամերիկա ճանապարհորդելու ժամանակ, գնացի Նիագարայի ջրվէժը տեսնելու, մեր գնացքը երկար ժամանակ կանգնած էր մէկ կայարանում, և սպասում էր որ հանդէպը եկող գնացքը անցնի: Հասարակութեան ցանկութեամբ ես ստիպված էի պատուհանից երևալ: Մեր առաջ դանդաղութեամբ անցնող վագոնից մէկ ազամարդու ձեռք մեկնվեցաւ դէպի ինձ և տուեց իր այցետոմսը, որի վրա տպված էր. N-r Roger Casement, իսկ տակը մատիտով գրված էր: «Ես յանձնեցի Պալմէրստօնին Վիդինի նամակը:» Նրանից յետոյ մենք այլ ևս երբէք չը հանդիպեցանք այդ մարդուն և ոչինչ չը լսեցինք նրա մասին:

* * *

Լօնդոնի «Daily News» լրագրի թղթակիցը Պալէրմօյից հեռագրում է ապրիլի 10-ից հետևեալը: Գարիբալդիի առողջութիւնը այնքան վերականգնվեցաւ, որ նա երէկ կարողացաւ Մօնրէալէ այցելել: Վերադառնալիս Պալէրմօյով անցնելու ժամանակ, նա քաղաքային պալատը իջաւ, որտեղ բնակվում էր դեռ 1860 թվին: Պալէրմօի ազգաբնակութիւնը հիացմունքով ողջունեց Գարիբալդիին: Երբ մամուլի ներկայացուցիչները ներկայացան, Գարիբալդին խրատում էր նրանց անխոնջ կերպով կռուել կղերականութեան դէմ և բարձր բռնել առաջադիմութեան և ազատութեան դրօշակը: Առաւօտեան, ապրիլի 11-ին, մատղվում էր գնալ Ջիրէլրօսայի բլուրը և ս. Հոգու եկեղեցին, իսկ ապրիլի 12-ին, Գարիբալդի, երևի Կապրէրա կը վերադառնայ:

* * *

Նորերումս եգիպտական խէդիվ Տէֆվիկ-փաշա հարկաւոր համարեց մի քանի ժամով պօլիցիական բանտարկութեան ենթարկել իր եղբօր՝ Հուսէյն փաշայի կանանցից մէկին և իր հանդուցեալ հօրեղբօր Մուստաֆայի կնոջը անբարոյական վարմունքի համար: Երկու պրինցէսաները, ինչպէս հաղորդում է Ալէքսանդրիայի «Fieramosca» լրագիրը, ծածուկ կերպով թողեցին իրանց հարեմը, և ֆրանսիական Պարադէ և Դիւշէն դերասանների հետ միասին գնացին քաղաքից դուրս քէֆ անելու համար: Նրանք սկզբից տիկին Դիւշէնի ընակարանում շորերը փոխեցին, իսկ յետոյ ֆրանսիական մի հիւրանոց գնացին, ուր լաւ նախաճաշեցին շամպանիայով: Նախաճաշիկից յետոյ, նրանք կառքով գնացին զբօսնելու Աբուսիէ բուլվարի վրա, ուր մի քանի տղամարդիկ սկսեցին խօսել նրանց հետ: Պոլիցիան, այնու ամենայնիւ, ճանաչեց երկու իշխանուհիներին, չը նայելով որ շորերը փոխած ունէին նրանք, և իմացում տուեց խէդիվին, որը հարեմական օրէնքները քանդելու պատճառով հրամայեց պօլիցիական բանտարկութեան ենթարկել նրանց:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 ապրիլի: Новое“ Время“ լրագիրը հաղորդում է. այսօր Ս. Պետերբուրգում սպասում են Մեծ իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչի վերադարձին: Փարիզի միջ հաւատացնում են, որ ռուսաց կառավարութիւնը բանակցում է 52 միլիոն մետալ ռուբլի փոխառութիւն անելու 3% օրլիգացիաներով Բագու-Թիֆլիս-Բաթում երկաթուղու շինութեան ծախսերը ծածկելու համար: Պետական կօնտրոլից երկաթուղիները վերաքննելու համար նախագիծը ներկայացրած է պետական խորհրդին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 ապրիլի: Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 95 ր., երկրորդ 90 ր. 87 կ., երրորդ 91 ր. 5 կ., չորրորդ 90 ր. 87 կ., հինգերորդ 90 ր. 75 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 219 ր. 50½ կ., երկրորդ 212 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմակը արժէ 90 ր. 62 կ., երկրորդ 90 ր. 25½ կ., երրորդ 90 ր. 50 կ., ոսկի 8 ր. 8 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 24,37 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 208 մարկ, Փարիզի վրա արժէ 257 ֆրանկ: Բօրսայի տրամադրութիւնը հանդիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՒՐԱԲԱ, շաքարի ձուաներ, պանիր-չեստեր, խաւիար և այլն։ Ծախվում են շատ էժան

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ

Նոյն տեղ ծախվում են. բազկաթոռ-մահճակալ 8 ր., ամբողջ **ՀԱԳՈՒՍՏ** 12 ր., չը թրջող վերարկուներ 6—18 ր. և մեծ քանակութեամբ **ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ**, դանակներ և այլն։

10—10

ՄԻ ԳԵՐՄԱՆՈՒՀԻ ՏԻԿԻՆ

ցանկանում է դասեր տալ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ, ԱՆԳԼԻԵՐԷՆ և ՖՐԱՆՍԵՐԷՆ լեզուներից և նոյնպէս ընդհանուր ուսումնարանական առարկաներից։

ՊԱՑՄԱՆՆԵՐԻ մասին դիմել „ՄՇԱԿԻ“ խմբագրութեանը։

2—10

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ,

Որ մայիս ամսի կէսից մինչև ամառվայ վերջը բնակվելու է ՄԱՆԳԼԻՍՈՒՄ, յանձն է առնում ՊԱՐԱՊԵԼ թէ կրկնութեամբ և թէ դասերով զանազան ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ և թէ փոքր երեխաների հետ։

Մանրամասն ՊԱՑՄԱՆՆԵՐԸ, այսինքն՝ ո՞ւմ և ի՞նչ հասակի երեխայի հետ պէտք է պարապել, ի՞նչ առարկաներից, ո՞ր քան ժամ և այլն և այլն խնդրում են ցանկացողներին թողնել „Մշակի“ խմբագրատան մէջ, ուր կարող են գտնել և յիշեալ ուսանողի հասցէն։

5—10

ՎԻԷՆՆԱՅԻ ԱԹՈՌՆԵՐ

36 ՐՈՒԲԼ

Եփ. Ծատուրեանցի դէպոյում

14—20

ԶՄԻՒՌՆԻԱՅԻ

„ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ“ ամսագրին բաժանորդագրվում են Բ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան գրասենեակում։ Տարեկան գինը, 12 տետրակի 10 ռուբլ է։ Հասցէն՝ Тифлисъ, Газетное Агентство В. Шавердова.

10—10

JOURNAL D'ORIENT

HEBDOMADAIRE

Paraissant a VIENNE (Autriche)

ABONNEMENTS: 1 an. . . 8 roubles

6 mois. . . 4 —

REDACTEUR EN CHEF F. Salles.

1. Weihburggasse 9. (Vienne)

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գոլովինսկի պրոսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօի։ Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից։

ԵՒՐՕՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԵՐԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ

ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

Արժարանում գալլերիում, № 144 ծանկովում է արժան դեմով

Ցօնկ Ֆաբրիկայի ամեն տեսակ մեծաքանակ մեծաթոշակ Մեթլինգ Դամբարդոն

Հաւթելիները և շրջանակները։

19—60

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ԲԱԹՈՒՄ

Ազնաուրովի բաթումի գործարանից նոր բերված է մեծ քանակութեամբ ամենալաւ ԾԽԱԽՈՏ և ՊԱՊԻՐՈՍՆԵՐ։ Ծախվում է Միքայէլեան կամուրջի վրա ԾԽԱԽՈՏԻ ԴԷՊՕՈՒՄ և Գոլովինսկի փողոցի վրա ՐԱՄԱԶՕՎԻ խանութում։ Ցանկացողները ըստանալ մեծ քանակութեամբ կարող են պատուիրել նոյն տեղը Միխայել Մերուրնութովին։

3—3

Միջի փողոց, Կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Ամենայն էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սուն դուկներ ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուռմիվալնիկներ մրամոռնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվերներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) ըէվոլվերի, սիգար Ռէնգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոսի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՑ (չայ) ԵՎ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կոֆէ էլինէմի և Միխէլսոնի. Պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարէջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пухъ), պաղնոներ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջրի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբորմիս կարելու մաշինայ. Անգլիական ուլթոներ, Բրիտանսկի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, Ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրախմալ կարօբկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ձակոյ, թուղթ փոշի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարեմախատ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանսկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուտիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. Ջուխտ, պոլսապոշկաններ վարշավու, ՌԵՋԻՆԻ ԿԱԼՈՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. Ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, զնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոնի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատակի կօճի և շալէ (гарусъ) ֆէլչատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերէյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կոռը, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այն և այն և այն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ միշտապէս գտնվում են ՄԻԵՒԱՅԵԼ ՏԻՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում (въ складѣ) Միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

29—180

Միջի փողոց, Կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ԱՄՍՎԱՅ ՎԵՐՋԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 կ. դիւժինը, ԾՐԱՐՆԵՐ 3 կ. հարիւրը, սապօն 3 կ. հատը, արևի ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐ 50 կ., ՇՂԹԱՆԵՐ (նոր ոսկուց) ժամացոյցի համար 50 կ., կրաններ 10 կ., ջրի ամաններ 30 կ., կժեր 25 կ., կախարաններ 4 կ., ՖԻԼՏՐԱՆԵՐ 3 ր., ԾԸԾԻՀՆԵՐ 1 ր., հայելիներ 35 կ., վարտիքներ 4 ր., պիջակներ 6 ր., ԱՄԲՈՂՋ ՀԱԳՈՒՍՏ 13 ր., գլխարկներ 1 ր., չը թրջվող վերարկուներ 6 ր., շչէոտկա 90 կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 2 ր. 50 կ. դիւժինը, ՄԵՂՐԱՄՈՄ 32 կ. անգլիական ֆունտը, կանֆետներ 40 կ. ֆունտը, ԴՐԱՊ, տրիկօ, ԱԼԲՕՄՆԵՐ, բրիտանական մետալի առարկաներ և այլն ԿԻՍԱԳՆՈՎ, մոմեր, մուրաբա և այն շատ էժան։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻՑ։

14—50

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ ՐԱՖՖԻ

ԴԱՒԻԹ ԲԷԿԻ

III ԳԻՐՔԸ

Բաղկացած է 563 երեսներից

ԳԻՆՆ Է 2 ՐՈՒԲԼ

Վէպի այս հատորի մենավաճառութիւնը պատկանում է բացառապէս Թիֆլիսի «ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻՆ»։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով.

„ЦЕНТРАЛЬНАЯ КНИЖНАЯ ТОРГОВЛЯ“ (на Головинскомъ проспектѣ въ д. Мириманова, №№ 3 и 4).

ВЪ ТИФЛИСѢ

10—10

Պատիւ ունեմ յայտնել որ իմ նոր բացած ՖԱԲՐԻԿԱՑՈՒՄ լաւ ԾԽԱԽՈՏԻ սիրողները և գործածողները կը գտնեն

ԸՆՏԻՐ ԾԽԱԽՈՏ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

Մաքուր Թիւրքաց, ամենալաւ տեսակների ծխախոտից, առանց որ և է խառնուրդի։ Ես երաշխաւոր եմ որ իմ պատրաստած ծխախոտը կարող է բաւականացնել ամենաընտիր ճաշակին։ Ծխախոտի գինը, ֆունտը 3 ռուբլուց մինչև 10 ռուբլ, իսկ պապիրոսների 100 հատը սկսած 1 ռուբլուց, մինչև 3 ռուբլ։

Գործարանս գտնվում է 3-որդ բաժնում Հեռագրական կայարանի մօտ, իսկ մագազինս Արծրունու գալլերէում, Դվորցովի փողոցի վրա, № 3.

Պարտք եմ համարում այն էլ աւելացնել որ իմ ֆաբրիկայի արդիւնաբերութիւնները կը ծախվեն միմիայն իմ մագազինում։

Գործարանատէր ՇԱՀԻՆԵԱՆՑ

19—25

ԱՐԴԷՆ ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

Ռուսաց յայտնի գրող **ՎՈՒԶԵՏԻՉԻ** „ДВѢ ЕЛКИ“ մանկական գրքուկի հայերէն թարգմանութիւնը „ԵՐԿՈՒ ՏՕՆԱԾԱՌ“ անունով։

Այս գրքոյկը ընդունել էր տպագրելու հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութիւնը. բայց իրանից անկախ պատճառներով ինքն ընկերութիւնը յաջողութիւն չունեցաւ տպագրելու։ Տպագրված է շատ ընտիր թղթի վերայ խոշոր տառերով։

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԷԿ։

Կարելի է ստանալ թէ՛ կենտրոնական գրավաճառանոցից և թէ՛ թարգմանողից՝ հետևեալ հասցէով.

Тифлисъ—на Авлабаръ Ивану Петровичу *Назаріанцъ.*

Дозволено цензурою, Тифлисъ, 13 Апрѣля 1882 года.

Типогр. Главн. Упр. Главноначальств. гражд. час. на Кавк., Лор.-Мелик. ул., каз. д.